

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

04.07.2006թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դանիելյան, Հ. Պետրոսյան, Գ. Գևորգյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ջ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում` չորս հարց.

1. «Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ՖԱ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գյուրջյան/

2. «Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գյուրջյան/

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գյուրջյան/

4.Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բովերկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ՖԱ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գյուրջյան/

Որոշեցին՝

Հաստատել «Առողջապահական կազմակերպությունների և դեղատների ֆինանսական գործունեության վերաբերյալ» Ձև թիվ 1-ՖԱ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը:

/Նորմատիվ/

/Բովերկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. «Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գյուրջյան/

Որոշեցին՝

Հաստատել Տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների վրա կատարված ծախսերի վերաբերյալ» հետազոտության հարցաթերթը:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/

Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 23-ի «2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 37-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա/ «Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից պետական վիճակագրական աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացվելիք որոշ ամփոփ աշխատանքների (ցուցանիշների) ցանկը» հավելված VI-ի «1. Ըստ ոլորտների» բաժնից հանել.

- " -	Հանրապետությունում լիցենզավորված հեռահաղորդակցության բնագավառում ծառայություն մատուցող կազմակերպությունների ցանկը	Աղյուսակի տեսքով (եռամսյակային)	20	ներքին օգտագործման համար
-------	-------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------	----	--------------------------

տողը,

բ/ «Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների կողմից պետական վիճակագրական աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացվելիք որոշ ամփոփ աշխատանքների (ցուցանիշների) ցանկը» հավելված VI-ի «2. Ըստ վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների» բաժնից հանել.

- " -	Հանրապետությունում լիցենզավորված հեռահաղորդակցության բնագավառում ծառայություն մատուցող կազմակերպությունների ցանկը	Աղյուսակի տեսքով (եռամսյակային)	20	
-------	-------------------------------------------------------------------------------------------------------------------	---------------------------------	----	--

տողը:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան